

Հենրիկ Իբսէն

ԵՐԲ ՄԵՆՔ ՄԵՌԱԾՆԵՐՄ ՍԹԱՓՈՒԵՆՔ *)

Դրամատիքական էպիզօդ երեք արարուածով

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Լեռնային մի բուժարանի մօտերքը: Տեսարանը ներկայացնումէ լեռնային ճճի ափին փոռուած ընդարձակ ծառազուրկ սարահարթ: Զրի միւս ափին երևում են լեռնաշղթայի շարքեր, ձորակներում ձիւն: Ետև դէպի ձախ, սեպաձև ժայռից երկու մասի բաժանուած, հոսում է մի աղբերակ, որի երկարութեամբ ընկած են քարեր, թփեր ու բուսականութիւն: Ետև դէպի աջ գտնուում է մի բարձրավանդակ, գագաթին քարէ նստարանով: Ամառ է, կէսօրից յետոյ, արևի մալր մտնելուց փոքր առաջ: Սարահարթի մի կողմում խաղում, պարում, երգում են մի խումբ երեխաներ, քաղաքացու ու գիւղացու հագուստներով, որտեղից և տարածում է զուարթ ծիծաղ:

Որուբէկը մի շալ ուսերին ձգած, նստած է վերի նստարանի վրայ ու զիտում է խաղը: Փոքր յետոյ սարահարթի ձախ կողմում, թփերի մէջ երկում է Մ'այան և ձեռքերը ճակատին դրած, աչքերը ստուերելով շրջահայում է: Նա հագած է կարճ, բարձրացրած լոգիկ, ունի ճանապարհորդի թաղեայ զլիսարկ, բարձր կօշիկներ և ձեռին մի երկար լեռնափայտ):

Մ'այա. (Վերջապէս նկատում է Ռուբէկին ու կանչում): Հահահօծօ...: (Սարահարթով առաջ է գալիս, ձեռնափայտին յենուելով թռչում աղբերակը ու բարձրանում բլրակը):

Մ'այա. (Հեալով): Ախ, ինչքան եմ վազգել ու փնտռել քեզ:

Ռուբէկ. (Սառնասիրա): Բուժարանից ես գալիս:

*) Լումայ 5—6.

Մայա. Այս:

Ռուբէկ. (Նայում է հարևանցի): Ճաշի չէիր եկելք

Մայա. Մենք մեր ճաշը բացօդեայ վայելեցինք, երկուսս...

Ռուբէկ. «Երկուսս»: Ի՞նչ երկուս:

Մայա. Ես—և այն տարօրինակ արջասպանը: Էլ ով կմնէր.

Ռուբէկ. Ախ նա:

Մայա. Այս նա. և մենք կամենում ենք առաւօտեան վաղ նորից բարձրանալ:

Ռուբէկ. Արջեր որսալով:

Մայա. Յիրաւի:

Ռուբէկ. Սկի հետք գտել էք:

Մայա. (Խորհում): Խնդրեմ, մերկ բլրների վրայ արջ չի լինում:

Ռուբէկ. Հապա ուր:

Մայա. Խորքում: Զառիվայրում—ուր անտառը անչափ խիտ է և սովորական քաղաքացիք ընդհանրապէս անցնել չեն կարող:

Ռուբէկ. Այստեղ էք կամենում ենել առաւօտեան:

Մայա. (Մեկնում է կանաչի վրայով): Ալդպէս ենք պայմանաւորուել: Բայց թերևս հենց այս երեկոյ ենենք: —Եթէ դու ընդդէմ չես:

Ռուբէկ. Ե՞ս: Ամենեին—

Մայա. (Արագ): Լարսն էլ մեզ կուղեկցի շներով—այս էլ ասեմ:

Ռուբէկ. Ես սկի չը հետաքրքրուեցի հարցնել պարոն Լարսի ու նրա շների մասին: (Ընդհատելով): Բայց դու չէիր կամենալ այստեղ շնորհով նստել:

Մայա. (Ցողնած): Ոչ, շնորհակալ եմ: Ալսպէս հանգիստ պառկած եմ կանաչի վրայ:

Ռուբէկ. Ինչպէս տեսնում եմ յոդնած ես:

Մայա. (Խորը շնչելով): Հաւատացած եմ, որ շուտով կը յոդնեմ:

Ռուբէկ. Այդ դեռ յետոյ կը տեսնես, երբ մեծ ջանք գործ կը դնեմ:

Մայա. (Ննջող դռնով): Այս: Ցանկանում եմ փոքր ինչ աչքերս խփել:

(Կարճ պառզա):

Մայա. (Ցանկարծ անհամբեր): Չէ, Ռուբէկ—չեմ հասկանում ի՞նչպէս ես կարողանում երեխաների աղմուկը միշտ լսել և տեսնել նրանց այդ ցատկութմները:

Ռուբէկ. Նրանց շարժուածեների մէջ որոշ մոմենտներում

Ներդաշնակութիւն կալ—մի տեսակ երաժշտութիւն։ Եւ այդ սակաւ մօմնատներին սպասելը ինձ բաւականութիւն է պառագառում։

Մայա։ (Փոքը ինչ արհամարհական ժապավակ)։ Իրաւ որ դու միշտ ու յաւէտ գեղարուեստագէտ ես։

Ռուրէկ։ Եւ ցանկանում եմ այդպէս էլ միշտ մնալ։

Մայա։ (Թաւալւում է մի կողմ և ետեւ ամռանուն շըրջում)։ Նրա մէջ գեղարուեստագիտութեան ոչ մի հետք չը կայ։ Ռուրէկ։ (Ուշադիր)։ Ո՞ւմ մէջ։

Մայա։ (Բնուու)։ Նու—միւսի մէջ։

Ռուրէկ։ Արջասպանի։

Մայա։ Այս։ Նրա մէջ գեղարուեստագիտութեան ոչ մի հետք չը կայ։

Ռուրէկ։ (Ժապավակ)։ Ոչ, երկինքը վկայ, դու իրաւացի ես։

Մայա։ (Բուռն, առանց շարժուելու)։ Եւ ինչ ատելի է նա։ (Պոկում է մի փնջիկ խոտ ու դէն շպրտում)։ Այնպէս ատելի, այնպէս ատելի։

Ռուրէկ։ Բայց և այնպէս դու սիրով ձգտում ես նրա հետ դրսում անցնել—որսի ենել։

Մայա։ Ես էլ չը գիտեմ։ (Շըրջում է դէպի նա)։ Դու ևս ատելի ես, Ռուրէկ։

Ռուրէկ։ Նմը ես նկատում։

Մայա։ Ոչ, վաղուց գիտէի։

Ռուրէկ։ (Ուսերը թօթափելով)։ Մարդ պառաւում է, տիկին Մայա, ծերանում։

Մայա։ Ես ամենեին այդպէս չեմ կարծում։ Մակայն քռհայեցը կարծես թէ յոզնած է, ճնշուած։—Երբ դու բարեհաճում ես ինձ կողքից նայիլ։

Ռուրէկ։ Դու կարողացել ես այդ նկատել։

Մայա։ (Գլուխը տատանելով)։ Քո աչքերը ատելի ու աւելի են այդ վատ արտայայտութիւնը ընդունում։ Կարծես դու իմ դէմ մի գաղտնի գիտաւորութիւն ունես։

Ռուրէկ։ Համ։ (Ուրախ, բայց լուրջ)։ Արի ու նստիր ինձ մօտ, Մայա։ Փոքը ինչ զրուցենք։

Մայա։ (Կիսով չափ ուղղուում է)։ Կարմղ եմ քո ծնկներին նստել, ինչպէս նախկին տարիները։

Ռուրէկ։ Ո՞չ, այդ չի կարելի։ Հիւրանոցից մեզ կը տեսնեն։ Բայց դու կարող ես այսաեղ նստել, նստարանի վրայ—ինձ մօտ։

Մայա։ Ո՞չ, չնորհակալ եմ, այդ դէպօւմ կը մնամ

այստեղ պառկած։ Ես այստեղից ևս լաւ եմ լսում։ (Նայում է հարցական։) Նու, ինչի՞ մասին ես կամենում խօսել։

Ռուբէկ։ (Սկսում է ծանր։) Ինչ ես կարծում, ինչնեւ եմ ես այս ամառային ճանապարհորդութիւնը ձեռնարկել։

Մայա։ Շատ պատճառաբանութեամբ հանդերձ՝ 'ի միջի այլոց ասում էիր, որ ինձ համար ես շատ լաւ կը լինի։ Բայց— Ռուբէկ։ Բայց—

Մայա։ Բայց այժմ այլ ես չեմ հաւատում, որ պատճառը այդ էր։

Ռուբէկ։ Այլ—

Մայա. Այլ 'ի սէր այն գունատ տիկնոջ,

Ռուբէկ։ Տիկին Սատովիք։

Մայա. Այս, նրա պատճառով, որ մեզ հետապնդում է և երեկ երեկոյեան էլ այստեղ է ժամանել։

Ռուբէկ։ Նու, յիսո՞յ։

Մայա. Դու նրան շատ լաւ ծանօթ ես եղել, նախ քան ինձ եետ ծանօթանալդ։

Ռուբէկ։ Եւ կրկին մոռացել—վաղուց, նախ քան քեզ պատահեմ։

Մայա. (Ուղիղ նստելով։) Դու այդպէս շուտ մոռանմաւ ես, Ռուբէկ։

Ռուբէկ. (Կարճ։) Այն, անասելի շուտ։ Երբ մոռանալ եմ կամենում։

Մայա. Նոյնպէս և մի կնոջ, որ քեզ իբրև մօղմլ է ծառաւեր Ռուբէկ. Երբ ես նրան այլ ևս եր կար կարիք չ'ունեմ։

Մայա. Նոյնպէս և երբ նա քո առջն բոլորովին մըրկաց է։

Ռուբէկ. Այդ ոչինչ չի նշանակում։ Գոնէ գեղարուեստագէտների համար։ (Այլ տոնով։) Մէկ էլ—եթէ հարցնել կարող եմ— ինչպէս կարող էլ գուշակել, որ նա այստեղ է։

Մայա. Օ՛, դու կարող էիր նրա անունը ամառանոցի հիւրաթերթի մէջ կարդալ։ Կամ թէ մի այլ լրագրում։

Ռուբէկ. Բայց նրա այժմեան անունը ամենեին չը գիտէի։ Իմ կեանքում Սատով անուն չէի լսել։

Մայա. (Յոգնած ձևանալով։) Նու, երեկ դու մյլ պատճառով կամեցար ճանապարհորդել։

Ռուբէկ. (Լուրջ։) Այն, Մայա,—բոլորովին այլ պատճառով։ Եւ սրա մասին կարևոր է մեզ վերջապէս խօսել։

Մայա. (Զսպելով ծիծաղը։) Ինչ հանդիսաւոր տեսք ունեսւ Ռուբէկ։ (Կասկածու կերպով զննելով։) Այն, թերևս ամելի հանդիսաւոր, քան այդ կարևոր է։

Մայա. Ինչպէս—

Որութէկ. Իսկ մեզ երկուախս համար պէտք է որ այդ կարևոր լինի.

Մայա. Դու սկսում ես ինձ հետաքրքրել, Որութէկ.

Որութէկ. Հետաքրքրել միայն եւ ոչ փոքր ինչ անհանգ գտացնեմ:

Մայա. (Գլուխը շարժելով) Ամենևին:

Որութէկ. Լաւ! Դէ լսիր!—Դու այստեղ, ներքեւ, ամառանոցում ասում էիր, որ ես վերջերս ջղային եմ դարձել:

Մայա. Այս և այդ ճիշտ էր:

Որութէկ. Իսկ ինչ ամառառով, ինչ ես կարծում:

Մայա. Ես ինչ գիտեմ: (Արագ) Գուցէ դու արդէն յադեցել ես ինձ հետ միասին յաւէտ կեանք վարելուց:

Որութէկ. Յաւէտ: Աւելացրու իսկոյն և մշտնջենական:

Մայա. Նու, ուրեմն ասենք ամենօրեայ միասին ապրուակից: Մենք երկու աներեխայ մարդիկս չորս-հինգ տարեր իրար հետ ենք անցրել միշտ, հազիւ մի ժամ իրարից զատ:—**Միշտ** երկուսս մեն-մենակ:

Որութէկ. (Հետաքրքրուած) Նու, յետի:

Մայա. (Շեշտումն) Դու հասարակական մարդ չես, Որութէկ: Դու հաճոյքով գնում ես քո ճանապարհովվը ու զբաղւուաքո սեպհական շահերով: Իսկ ես չեմ կարողանում ոչ մի անգամ կանոնաւոր կերպով խօսել քեզ հետ քո գործերի մասին—այդ գեղարուեստական հարցերի մասին: (Զեռքի մի շարժումով) Եւ Աստուած վկայ, այդ ինձ չի էլ հետաքրքրում:

Որութէկ. Այս, ուստի և մենք մեծ մասամբ նստում ենք վառարանի մօտ ու շատախօսում քո գործերից:

Մայա. Տէր Աստուած,—զրանք ինչ գործեր են որ:

Որութէկ. Թէկուզ չնչին, բայց և այնպէս: Իսկ ժամանակը առանց այդ էլ անցնում է, Մայա:

Մայա. Այդ դէպքում դու իրաւացի ես: Ժամանակը անցնում է և պատրաստում քեզնից հրաժեշտ վերցնելու, Որութէկ: Եւ այս է, որ քեզ անհանգիստ է անում:—

Որութէկ. (Գլխի տատանումներով): Եւ անհաստատ:—Այս աղքատ կեանքը հազիւ ես երկար տանել կարողանամ:

Մայա. (Կանգնում ու փոքր հեռուից դիտում է նրան): Կամենմամ ես ինձնից ազատուել, ասա պարզօրէն:

Որութէկ. Ինչ արտայայտութիւն: Քեզնից հեռանմալ:

Մայա. Եթէ կամենում ես ինձնից ազատուել, կարող ես բոլորովին պարզ խօսել: Եւ ես իսկոյն կը կապեմ իս կապոցը:

Որութէկ. (Աննկատելի ժպտով): Այդ հնչւում է որպէս մի սպառնալիք, Մայա:

Մայա. Թեղ համար այդ հաւանօրէն սպառնալիք լինել չե կարող:

Ռուբէկ. (Բարձրանալով): Ոչ, յիրաւի ոչ, (Փոքր յետոյ աւելացնում է): Մենք երկուս անկարող ենք այլ ևս երկար միասին ապրել:

Մայա. Ուրեմն—

Ռուբէկ. Խոդրեմ, ոչ մի ուրեմն: Մենք չենք կարող միասին ապրել, սակայն այդ չի նշանակում, թէ մեղ կարևոր է բաժանուել:

Մայա. (Արհամարհական ժապով): Միայն փոքր ինչ բաժան ապրել, համ:

Ռուբէկ. Եւ ոչ մի անգամ:

Մայա. Նու, ասա—ուրիշ ի՞նչ ես կամենում անել:

Ռուբէկ. (Փոքր անհանգիստ): Ի՞նչ ես այժմ այսքան սատիկ ու ցաւալի կերպով թախծում եմ, այդ մի էակ է, որ ներքնապէս իրաւ որ ինձ աւելի մերձ է կանգնած:

Մայա. (Դրգութած ընդհատում է): Միթէ, ես այդպէս չեմ, Ռուբէկ—

Ռուբէկ. Սխալ մի հասկացիր: Ես պէտք է մի էակի հետ կենակցէի, որ միենոյն ժամանակ ինձ լցնել, ամբողջացնել կարողանար, մէկ լինէր ինձ հետ իմ բոլոր ձեռնարկութիւնների ու ստեղծագործութիւնների մէջ:

Մույա. (Մանը): Այն, այդպիսի բարձր պահանջներին բաւարարութիւն տալ անտարակոյս ես անընդունակ եմ:

Ռուբէկ. Այդ քեզ շատ դժնդակ կը լինէր, Մայա:

Մայա. (Եռանդուն) Նոյնպէս և ոչ մի ցանկութիւն:

Ռուբէկ. Ես այդ լաւ գիտեմ: - Եւ քեզ հետ կապուելիս ես այդ օգնութեան մասին ամեննեին չէի մտածում:

Մայա. (Նրան զննելով): Քո հայեացքում ես կարողանում եմ կարդալ, որ գու մէկի մասին մտածում ես:

Ռուբէկ. Համ: Ես չը գիտէի, որ գու մաքեր կարդալ գիտես: Ուրեմն գու իմ հայեացքում այդ տեսնում ես:

Մայա. Տեսնում: Էհ, Ռուբէկ, ես քեզ ճանաչում եմ, շատ լաւ ճանաչում:

Ռուբէկ. Նու թերևս գիտես և ում մասին եմ մտածում:

Մայա. Յիրաւի:

Ռուբէկ. Նու խնդրեմ:

Մայա. Դու մտածում ես այն—այն մօդելի մասին, որ գու ունեցել ես այն—(Յանկարծ թելը կորցնելով): Գիտեմ, որ հիւրանոցում մարդիկ նրան ցնորուած էին համարում:

Որութէկ. Նա, իսկ ինչ են կարծում քո և արջապահներ մասին:

Մայա. Մեր խօսքը դրա մասին չէ: (Շարունակելով ընդհատածը:) Յամենայն դէպս դու մտածում ես այն գունատ տիկնող մասին:

Որութէկ. (Հաստատու) Նրա մասին միայն և ոչ ուրիշից— երբ ես այլ ևս նրան կարիք չունէի,—ասենք բացի այդ նա ինը ինձ թողեց—և անհետ կորաւ—

Մայա. Այն դէպրում դու ինձ իբրև մի տեսակ ապաւէն ես վեցցրել:

Որութէկ. (Անսակնած) Ճիշտն ասած, համարեա այդպէս, իմ փոքրիկ Մայա: Ես մէկ կամ մէկ ու կէս տարի միայնակ թափառելուց յետոյ, ձեռք մեկնեցի— վերջին անգամ—իմ աշխատանքին: «Յարութեան օրը» աշխարհ եկաւ, ինձ համբաւ բերաւ—իսկ միւսներին բերկրանք: (Աւելի տաք:) Սակայն ես չէի սիրում իմ երկը այլ ևս եւ մարդկանց պսակներից ու խնկարկումներից ես աւելի սիրով մութ անտառներ կը փախչէի: (Նայում է նրան): Նու, զու մաքեր գուշակող ես—կարմղ ես այժմ գուշակել, ինչ էր մնում ինձ անել:

Մայա. Պարոնների ու կանանց կենդանագիրներ շինել:

Որութէկ. (Դիմի տատանումներով) Հստ պատուէրի, այն: Դիմակի տակ կենդանակերպ ծաղրանկարներով, որը ստանում էին ձրի—իբրև յաւելուած: (Ժպտում է): Սակայն իսկապէս, չէի կամենում ասել:

Մայա. Ալ:

Որութէկ. (Լուրջ) Բոլոր այս գեղարուեստական հոչակը, այս գեղարուեստական զբաղմունքը, բոլորը, ինչ սըս հետ կապակցուած է—սկսեց ինձ հիմնապէս դատարկ, ունայն ու նշին թուալ:

Մայա. Իսկ ինչ կը կամենալիք դրա փոխարէն:

Որութէկ: Կեանք, Մայա:

Մայա. Կեանք:

Որութէկ. Այո, միթէ գնահատելի չէ գեղեցկութեան մէջ, արևի ճառագալթների տակ կեանք ունենալ, քան մինչև վերջը տանջուել մի իսոնաւ որջում կաւէ-զանգուածի ու բարէ-կաղապարի հետ:

Մայա. (Թեթև հառաջով) Կատարեալ եմ կարծիքի համեմատ:

Որութէկ. Բացի այդ ես արդէն բաւական հարստացել էի առատութեան մէջ ու արևի հպարտ ճառագայթների տակ

ապրելու։ Ես կարողացայ Տառնիցէր լճի ափին մի վիզա կառուցանել և քաղաքում մի պալատ։ Մնացածի մասին դեռ լունք։

Մայա. (Ամուսնու տոնով։) Եւ ՚ի վերջոյ միջոց էլ ունեցար ինձ ձեռք բերելու և բոլոր քո գանձը ինձ հետ կիսելու։

Ռութէկ. (Կատակով։) Եւ չէ՞ կամենում միթէ, քեզ մի բարձր լեռ տանել ու աշխարհի բոլոր հրաշալիքը ցուցնել։

Մայա. (Հեղօրէն։) Թերևս դու ինձ բարձր լեռ ես տարել, Ռութէկ, սակայն աշխարհի հրաշալիքները դեռ ցոյց չես տուել։

Ռութէկ. (Թեթև գրգռուած։) Անբաւական ես դու, Մայա, անբաւական։ Բայց գիտեմ ամենից շատ ինչն է տիրալի։ Տեղեկութիւն ունեմ։

Մայա. Երեկ այն, որ դու կապուած ես ինձ հետ քո կեանքի ամբողջ ընթացքով։

Ռութէկ. Ես չեմ ցանկանում այդ աստիճան անսիրուարտայտել։

Մայա. Սակայն իմաստը հաւանօրէն նոյնքան անսիրուարտ է։

Ռութէկ. Դու ամեննին գաղափար չունես, ինչ բնաւորութիւն ունի գեղարուեստագէտ մարդը։

Մայա (Ժպտում ու գլուխը շարժում է։) Ես սկի իմ սեպհական ներքինի մասին գաղափար չունեմ։

Ռութէկ. (Անվրդով։) Ես արագ եմ ապրում, Մայա։ Գեղարուեստագէտներիս համար միշտ այնպէս է, մեր ծանօթութեան այն մի զոյգ տարիների ընթացքում ես մի ամբողջ կեանք անցրի։ Ինձ նման մարդիկ չափաւոր յագեցման մէջ ոչ մի բաղաւաւորութիւն չեն գտնում, ես համոզուեցի այս բանում հետզհետէ։ Ինձ և ինձ նմանների համար կեանքը այսպէս հասարակ չէ։ Ես պիտի անդադար աշխատեմ—երկի ետեկից նոր երկ ստեղծեմ—մինչ իմ վերջին օրը։ Այդ իսկ պատճառով քեզ հետ երկար կենակցել չեմ կարող։ Առնուազն քեզ հետ միայնակ։

Մայա. (Հանգիստ։) Մի խօսքով այդ նշանակում է տաղտկալի՞ է քեզ ինձ հետ,

Ռութէկ. (Չալրացած։) Այս Տաղտկալի է այս կենակցութիւնը քեզ հետ, անարտայայտելի ու ձանձրալի։ Այժմ լսեցիր այդ։ (Չսպուելով։) Կոշտ, ատելի խօսքեր եմ ասում քեզ ահա։ Ես այդ լաւ եմ համարում։ Իսկ չդու ոչինչ չես կարող անել— ես այդ լաւ գիտեմ։ Ես, միմիայն ես եմ կերպարանափոխուել, (կիսով չափ ինքն իրան.)—և մի վերածնումն կըել իմ սեպ-

հական կեանքի համար:

Մայա: (Ձեռները մածուցելով) Սակայն մենք ինչու չենք կարող մեր ճանապարհը շարունակել:

Ռուբէկ: (Զարմացած նայում է:) Կը կամենայթք:

Մայա: (Ուսերը թօթափելով) Այս, եթէ այդ պէտք է—
Ռուբէկ: (Գրգռուած:) Սակայն արդ չը պէտք է լինի: Կատ միայն մի ելք:

Մայա: (Ձեռը շարժելով) Այժմ դու նորից մատածում ես այն գունաս կնոջ մասին:

Ռուբէկ: Այս, ճիշտն ասած, ես պէտք է անդադար նրա մասին մտածեմ: Այն բողէից, երբ նրան կրկն տեսայ: (Մի քայլ մօտ:) Ես այժմ ցանկանում եմ սիրտս քեզ բանալ, Մայա:

Մայա: Նու:

Ռուբէկ: (Զառնում է կրծքին:) Տեսնեմ ես այստեղ—ես սրա մէջ մի փոքրիկ կողապած արկղիկ ունեմ: Իմ բոլոր քանդակապատկերները այստեղ են պահուած: Երբ նա անյայտացաւ, կողպուած մնաց արկղը, որովհետեւ բանալին նրա մօտ էր, նա հետը տարել էր: Դու, իմ փոքրիկ Մայա, բանալի չունէիք: Ուստի և ամեն ինչ մնաց արկղի մէջ առանց գործադրուելու: Անցնուած են տարիներ, սակայն այդ կողպուած գանձը ձեռք քերել ես չեմ կարողանում:

Մայա: (Նենգ ժպիտը ճնշելով) Թոյլ տուր նրան նորից բանալու—

Ռուբէկ: (Զի հասկանում:) Մայա—

Մայա: Նա հօ այժմ այստեղ է: Եւ երեխ այդ արկղիկի պատճառով է եկել:

Ռուբէկ: Սրա մասին ոչ մի խօսք չի եղել նրա ներկայութեամբ:

Մայա: (Նայում է անմեղ:) Բայց սիրելի Ռուբէկ—արժէ մի այս տեսակ հասարակ բանի համար ալսքան խօսել ու վիճել:

Ռուբէկ: Դու այս համարում ես հասարամկ բան:

Մայա: Անտարակոյա: Ազգի նրա հետ, որին կարիք ունեան ես կարող կը լինեմ ինձ ապաստան գտնել:

Ռուբէկ: Ո՞ւր:

Մայա: (Անհոգ:) Նու, ինձ մնում է միայն վիլլա քաշուել, եթէ այդ կարևոր լինի: Սակայն այդ կարևորը չէ, բանի որ քաղաքուած,—մեր մեծ տանը երեքիս համար հօ տեղ կարող է լինել:

Ռուբէկ: (Անհաստատ) Իսկ դու կարծում ես այդպէս

Երկար կը տեի:

Մայա: (Թեթև տոնով) Տէ՛ր Աստուած, — այդ չի կարելի, այսպէս չի լինիլ Աւելի լաւ է ուրեմն այդ մասին այժմ գլուխ չը ճաքեցնել:

Ռուբէկ: Իսկ եթէ արդպէս անկարելի լինի, Մայա, — այն ժամանակ ի՞նչ:

Մայա: (Անհոգ) Սյդ գէպըում կը թողնենք իրար, բոլորովին կը բաժանուենք: Ես դեռ կարող եմ աշխարհում ինձ համար մի տեղ գտնել, ուր ես ազատ կը լինեմ, ազնա, աղնատ: (Յանկարծ աջ ցոյց տալով) Ահա, պարոն պրոֆեսօր, ահա նա:

Ռուբէկ: (Շրջելով) Ո՞ւր է:

Մայա: Ահա այնտեղ: Ռոպէս մարմարեալ արձան նա քայլում է այստեղ:

Ռուբէկ: (Դիտում է ներքեւ, ձեռները աչքերի վերև:) Նա մարմարացած «յարութեան օրը» չէ: (Ինքն իրան:) Եւ ես կարողացալ նրան յիտ վանել—ստուերում թողնել: Օ՛, ես խենթա:

Մայա: Խչի՞ մասին ես ակնարկում:

Ռուբէկ: Ոչչի: Առնուազն ո՛չ քեզ հասկանալի:

(Իրենան մտնում է սարահարթը ձախ կողմից: Խաղացող երեխաները նրան նկատելով, ընդառաջ են վազում ու շրջապատում նրան: Նրանցից մի քանիսը արխասիրա ու մտերիմ են, միւսները երկոտ ու վախկու: Իրենան խօսում է կամացուկ նրանց հետ և դէպի սանսաորիա ուղարկում, որոնք վազում են մացառների միջով: Իրենան կամենում է աղբերակի ափին փոքր հանգստանալ, մերձենում է լեռնապարապին ու ձեռքը թաթառում թափուող սաւը ջրի հոսանքի մէջ:)

Մայա: (Խզուած ձայնով:) Գնա ներքն նրա մօտ և խօսիր հետը, Ռուբէկ:

Ռուբէկ: Իսկ մւր կերթաս դու:

Մայա: (Նայում է նրան նշանակիչ:) Այսօրուանից ես կերթամ սեպհական ուղիով: (Իջնում է բլրակից, ձեռնափայտի օգնութեամբ ցատկում առուակը ու իրենայի մօտ կանգ առնում:)

Ռուբէկը սպասում է ձեզ վերև, յարգելի տիկին:

Իրենա: Ի՞նչ է կամենում:

Մայա: Դուք պէտք է օգնէք նրան մի կողպած արկղիկ բանալու:

Իրենա: Արդեօք կարող եմ ես:

Մայա: Նա կարծում է, որ դուք միայն կարող եք:

Իրենա: Ուրեմն կը փոքձեմ:

Մայա: Այն դուք պարտաւոր էք, յարգելի տիկինու (Թնում է դէպի Սանատորիա):

Ռուբէկ: (Իջնում է Իրենայի մօտ ու մնում առուակիւ այս ափին կանգնած):

Իրենա: (Կարճ պառւզայից:) Միւսը ասում էր որ դու սպասում էր ինձ:

Ռուբէկ: Ես տարեց տարի քեզ սպասել եմ,—առանց այդ գիտակցելու:

Իրենա: Ես չէի կարող գալ, Արնոլդ: Ես անձնատուր էի մի երկար ու աներազ քնի:

Ռուբէկ: Այժմ արթնացած ես, Իրենա:

Իրենա: (Գլուխը շարժում է) Այն ծանր, խոր քունը ես դեռ կրում եմ աչքերիս մէջ:

Ռուբէկ: Դու կը տեսնես որ մեզ երկուսիս համար մութ և լոյս կը լինի:

Իրենա: Ես այդ չեմ հաւատում:

Ռուբէկ (Շեշտուն) Ես հաւատում եմ: Ես գիտեմ: Այժմ, երբ քեզ կրկին գտել եմ—

Իրենա:—Յարութիւն առած—

Ռուբէկ:—Եւ պայծառացած:

Իրենա: Միայն յարութիւն առած, Արնոլդ: Ո՞չ պայծառացած:

Ռուբէկ: (Թափուող ջրի հոսանքը ձեռքով դէպի նառղելով) Ո՞ւր էիր ամբողջ օրը, Իրենա:

Իրենա: (Խուսափելով թռչուելուց): Հեռո՛ւ, մահուան պաշտավայրում:

Ռուբէկ: (Թողնելով խաղը) Բո ընկերուհին այսօր քեզ հետ չէ:

Իրենա: (Ժպտում է) Բայց և այնպէս նա հետեւում է ինձ աչքերով:

Ռուբէկ: Այդ նա կարո՞ղ է:

Իրենա: (Երկշոտ շրջանայելով) Հաւատացած եղիր: Ուր էլ գնամ, ուր էլ կանգնեմ, նա ինձ աչքից չի թողնիլ, (շշնչարով,) մինչև մի գեղեցիկ առաւօտ ես նրան կը մորթեմ:

Ռուբէկ: Կամենմամ ես:

Իրենա: Ամբողջ սրտով երբ յարմար բողէ գտնեմ:

Ռուբէկ: Բայց ինչի՞ւ:

Իրենա: Որովհետեւ նա ուրուական է: (Փաղանալից): Երեսկայիր, Արնոլդ: Նա իմ ստուերն է դարձել ուղղակի, կումայ

Ռուբէկ. (Փորձում է հանգստացնել) Նու, նու, —մենք
բոլորս էլ ստուեր ունենք:

Իրենա: Ես ինքս իմ սեպհական ստուերն եմ: Զես հաս-
կանում ինձ:

Ռուբէկ. (Ճնշուած) Օ՛, ոչ, իրենա, ես քեզ հասկանում
եմ: (Նստում է առուակի ափին քարի վրայ) Իրենան յենուած
ժայռին կանգնած է նրա ետև:

Իրենա. (Փոքր պառւզայից) Ի՞նչ ես նստել այդտեղ ու
աչքերդ ինձնից շրջում:

Ռուբէկ. (Կոմաց, զլուխը շարժելով) Ես քեզ չը պէտք
է նայեմ, չէ:

Իրենա. Ինչու այդպէս միանգամից:

Ռուբէկ. Թեզ աանջում է մի ստուեր, իսկ ինձ իմ խայթիչ
զղանքը:

Իրենա. (Ուրախ գոյշեւով ու թեթևացած) Վերջապէս

Ռուբէկ. (Ցատկում է) Իրենա—ի՞նչ կայ:

Իրենա. (Խոյս տալով) Հանգիստ միայն; հանգիստ, հան-
գիստ: (Խորը շնչում և որպէս բեռից ազատուած, խօսում է) Այդպէս: Այս անդամ ազատ եմ: Այժմ մենք կարող ենք նստել
ու զրուցիլ, որպէս առաջ, —կենդանի կեանքում:

Ռուբէկ. Օ՛, իթէ միայն այդ կըկին կարողանայինք:

Իրենա. Նստիր տեղդ, իսկ ես կը նստեմ քեզ մօտ:

(Ռուբէկ նստում է նախկին տեղը, իսկ Իրենան նրա մօտ,
մի այլ քորի վրայ)

Իրենա. (Փոքր լոռութիւնից) Ես դարձել եմ քեզ մօտ
հեռաւոր երկրո՞ց, Արնոլդ:

Ռուբէկ. Այն. իսկապէս մի ճանապարհորդութիւնից, որ
անվերջ երկար էր:

Իրենա. Յետ եմ դառձել իմ տիրոջ, իմ հրամանատուել
մօտ —

Ռուբէկ. Դարձել ես տուն Իրենա,—և մենք տանն ենք:

Իրենա. Սպասմէլ ես ինձ ամբողջ օրերով:

Ռուբէկ. Ինչպէս կարող էի:

Իրենա. (Թէք հայեացքով) Ո՞չ,—ինչպէս կարող էիր:

Դու ոչինչ չը գիտէիր:

Ռուբէկ. Իսկապէս այն ժամանակ դու ինձ ուրիշի պատ-
ճառնվ չես թողիր:

Իրենա. Զէր կարող միթէ քո պատճառով լինել, Արնոլդ:

Ռուբէկ. (Անհաստատ նրան է նայում) Թեզ չեմ հասկա-
նում —

Իրենաւ Երբ ես հոգով ու մարմնով քեզ ծառայում էի — և արձանը պատրաստ էր, — մեր երեխան, ինչպէս դու կոչում էիր — այն ժամանակ ես իմ ամենաթանկագին զոհը դրի քո ու տերի առջեւ — և ինձ յաւտ ոչնչացրի:

Ռուբէկ: (Գլուխը շարժելով.) Որով և իմ կեանքը ամայի գարձրիր:

Իրենաւ (Վառը.) Ես այդ ցանկանում էի: Թեղ այլ ես ու չինչ չը պիտի յաջողուէր, ոչինչ — երբ արդէն պատրաստել էիր մեր միակ երեխան:

Ռուբէկ: Նախանձում էիր:

Իրենաւ (Սառը.) Աւելի շուտ ատում:

Ռուբէկ: Ատում, ի՞նձ:

Իրենաւ (Տաք) Աւելի, քեզ — այն գեղարուեստագէտին, որ այնպէս անփոյթ, անհոգ կերպով մի տաքարիւն մարմին վերցրեց, մի ջանել մարդու կեանք և նրա հոգին յափշտակեց, նրանից մի գեղարուեստաերկ ստեղծելու:

Ռուբէկ: Այդ քեզնից եմ լսում: — Միթէ ինքդ անհուն ցանկութեամբ ու ամենասուրբ տենչանքով չես մասնակցել իմ աշխատանքին: Մի աշխատանք, որի մօտ էինք ամեն առաւտա զերմեռանդութեամբ:

Իրենաւ: Ես կամենում եմ քեզ մի բան ասել, Արնոլդ:

Ռուբէկ: Նու.

Իրենաւ: Թո գեղարուեստը ես երբէք չեմ սիրել, նախ բան քեզ ծանօթանալը: — Եւ ոչ էլ յետոյ:

Ռուբէկ: Սակայն գեղարուեստագէտին, Իրենաւ:

Իրենաւ: Գեղարուեստագէտին այո:

Ռուբէկ: Նոյնպէս և իմ միջի գեղարուեստագէտին:

Իրենաւ: Հենց նրան: Երբ ես կատարեալ մերկ կանգնում էի այնտեղ քո առջեւ, ատում էի քեզ, Արնոլդ —

Ռուբէկ: (Վառը.) Ո՞չ, Իրենաւ: Այդ ճիշտ չէ:

Իրենաւ: Ատում էի քեզ, որովհետև դու կարող անում էի անշարժ մնալ:

Ռուբէկ: (Միծաղում է.) Անշարժ: Կարծում եմ:

Իրենաւ: Կամ առնուազն կատարեալ անձնիշխան: Որովհետև դու գեղարուեստագէտ էիր, միայն գեղարուեստագէտ և ոչ մարդ: (Տաք ու սրտանցի) Սակայն ես սիրում, էի արձանը, թաց ու կենդանի տոնի մէջ, — ինչքան նա հում տձե զանգուածից վեր էր յաղթանակում, որպէս մարդու մի ոգեշոմչ երեխայ — և նա մեր ստեղծածն էր, մեր երեխան: Իմ և քո:

Ռուբէկ: Իրապէս ու հոգով նա այդպէս էր:

Իրենա: ՏԵս Արնոլդ, այդ երեխայի պատճառով եմ եւս այս երկար ուխտագնացութեանը ձեռնարկել:

Ռուբէկ: (Յանկարծ ուշադիր) Այդ մարմարեայ պատկերի՞ պատճառով:

Իրենա: Անուանիր ինչպէս կամենում ես, ես կոչում եմ մեր երեխան:

Ռուբէկ: (Անհանգիստ) Եւ կամենում ես տեսնել: Պատրմաստ, „Սառը“ մարմարը, ինչպէս դու միշտ ասում էիր: (Արքագի) Չը գիտեմ միթէ, որ նա այժմ մի մեծ մուզէումի մէջ է գտնուում:

Իրենա: Լսածներից,

Ռուբէկ: Իսկ մուզէները քեզ գարշելի են թուում: Դու նրանց միշտ գերեղման էիր կոչում:

Իրենա: Ես կամենում եմ մի ուխտագնացութիւն անել այստեղ, ուր իմ հոգին ու իմ երեխան թաղուած է:

Ռուբէկ: (Անհանգիստ ու երկիւղած) Դու երբէք չը պիտի տեսնես այս: Լսում ես, իրենա: Ես թախանձում եմ, երբէք, երբէք:

Իրենա: Կարծում ես թերեւս ես մի անգամ ևս կը մեռնեմ:

Ռուբէկ: Ես ինքս էլ չը գիտեմ ինչ եմ կարծում: — Ի՞նչ կարող էի կարծել, որ դու այդպէս անբաժան կերպով կապուած ես այդ նկարի հետ: Երբ ինձ թողեցիր—նախ քան լիակատար.

Իրենա: Նա կատարեալ կերպով վերջացած էր: Ուստի և ես կարող էի հանգիստ հեռանալ—և քեզ մենակ թողնել:

Ռուբէկ: (Արմունկները ծնկներին է յենում և ձեռներով աշքերը ծածկում) Նա դեռ այն չէր, ինչ յետոյ պիտի լինէր:

Իրենա: (Արագ ու աննկատելի հանում է կրծքի տակից մի բարակ ու սուր դանակ ու բորբոք շնչում) Արնոլդ, —մեր երեխային որև է ցմաւ ես պատճառել:

Ռուբէկ: (Խուսափելով) Ժմաւ: — Ի՞նչ ես հասկանում այդ ժաքի տակ:

Իրենա: (Շնչառապառ) Ասա շուտով, ինչ ես արել մեր երեխայի հետ:

Ռուբէկ: Կամեմ, երբ դու հանգիստ նստես ու ինձ լսես:

Իրենա: (Թագցնում է դանակը) Կամենում եմ—կամենում եմ հանգիստ լսել, եթէ միայն այդ կարող է մի մայրը երբ...

Ռուբէկ: (Ընդհատելով) Եւ ապա մի նայիր ինձ, երբ ես պատմում եմ:

իրենա: (Նստում է նրա ետև քարի վրայի) Ահա նստում
ամ այստեղ, քո ետև,—Միայն թէ սկսիր:

Ռուբէկ: (Չեռները վերցնում է աչքերից ու դիտում
առջև) Երբ քեզ գտալ, այն բոպէից այլ ևս ինձ պարզ էր,
ինչպէս պէտք է քեզնից իմ կեանքի աշխատանքը սկիզբ առնէ:

Իրենա: «Յարութեան օր» էիր կոչում գու այդ երկը:
Ես կոչում եմ «մեր երեխան»:

Ռուբէկ: Ես այն ժամանակ դեռ ջահել էի, առանց որևէ
փորձաւութեան, կարծում էի յարութիւնը ամենալաւ ու
աքանչելի կերպով կարող է ներկայացնել միայն մի դեռատի,
անարատ կին—որին կեանքը դեռ չէ սրբապղծել—ազատ է որևէ
է բծից կամ աղտից:

Իրենա: (Արագ) Հմ, —այդպէս եմ պատկերացած ես
այն երկի մէջ:

Ռուբէկ: Իրօք ոչ ամբողջապէս, Իրենա:

Իրենա: (Լարուած) Ո՞չ ամբողջապէս: Ո՞չ այնպէս, ինչ-
պէս ես քո առջև կանգնած էի:

Ռուբէկ: (Պատասխանից խուսափելով) Հետևեալ տարի-
ների ընթացքում ես ինելացի դարձայ: «Յարութեան օրը» իմ
երեակայութեան մէջ սկսեց աւելի աճել, աւելի բովանդակիչ
դառնալ և ես կամեցայ նոր բաներ աւելացնել: Սակայն պա-
տուանդանը, որի վրայ միմիայն քո երկար նկարն էր կանգ-
նած, աւել տեղ չհնչնէր:

Իրենա: (Դիմում է դանակին, ապա նորից թողնում)՝
Նոր ինչ ես աւելացրել: Ասա:

Ռուբէկ: Ինչ շրջապատում իմ սեպհական աչքերով տես-
նում էի: Ես կամենում էի այդ ամենը նկարի մէջ ունենալ:
Այլ կերպ չէի կարող, Իրենա: Ես ընդարձակեցի պատուանդա-
նը, այնպէս որ նա այժմ մեծ ու ազատ էր: Նրա վրայ դրի
ուռած ու ճեղքուած երկրի մի կտոր, որի խորշից դուրս էին
սողում խորհրդաւոր կենդանակերպ մարդիկ—կանալք ու
տղամարդիկ—ինչպէս որ կեանքից գիտէի:

Իրենա: (Շնչասպառ լարուած) Խսկ ամբոխի մէջ պայծառ
ուրախութեամբ դեռատի կդյուն է կանգնած: Զէ, Արնոլդ:

Ռուբէկ: Ո՞չ բոլորովին մէջ աեղը: Ես ստիպուած էի
արձանը յետ բաշել—համօրէն ներդաշնակութիւն պահպանելու
համար, այլապէս շատ էր աչքի ընկնում:

Իրենա: Սակայն պայծառ հայեացը դեռ շողման է իմ
դէմքին:

Ռուբէկ: Յիրաւի, Իրենա: Գոնէ որոշ չափով: Թերեւ

փոքր ինչ մթագին, ինչպէս իմ նոր իդէան պահանջում էր,
Իրենաւ (Կանգնում է) Այդ նկարը արտայայտում է
կեանքը այնպէս, ինչպէս դու այդ տեսնում ես այժմ, Արնոլդ:
Ռութէկ: Այն, արդար է:

Իրենաւ: Եւ այդ նկարում դու ինձ մի փոքր գունատ ես
դարձրել, իբրև ետեւ նկար—մի գրուպպայի մէջ կանգնած:
(Հանում է դանակը:)

Ռութէկ: Ո՞չ ետեւ, այլ աւելի շատ մէջ տեղը—կամ թէ
մօտաւրապէս:

Իրենաւ: (Շնչում է) Այժմ դու ինըդ կարդացիր քո
դատավճիռը: (Կամենում է խրելի:)

Ռութէկ: (Շրջում, նայում է նրան) Իմ դատավճիռը:

Իրենաւ: (Թագցնում է դանակը և խօսում խուլ, որպէս
տանջանքներից:) Իմ ամբողջ հոգին—դու և ես—մենք, մենք,
մենք և մեր երեխան այդ մենակեաց կերպարանքի մէջ էինք:

Ռութէկ: (Սրբում է ճակատի քրաինքը:) Բայց լսիր և
նոյնպէս ինչպէս եմ ես ինձ ներկայացրել այդ գրուպպալի
մէջ: Աղքիւրակից փոքր հեռու, ինչպէս այստեղ, նստած է մի
յանցապարտ մարդ, որ չի կարողացել երկրի կեղկից ամբող-
ջովին գուրս լինելի ես այդ անուանում եմ կորցրած կեանքի
ստրջանք: Նա մատերը թաւալուող ջրի մէջ է սուզում մաք-
րելու—և տանջում, գալարուում է այն մտքի տակ, որ այդ
նրան չի յաջողուեր, Նա չի կարող յափտեանս ազատուել,
ազրել ու յարութիւն առնել: Նա յաւէտ կը մնայ իր այդ
գեհենի մէջ:

Իրենաւ: (Կոշտ ու սառը:) Բանաստեղծ:

Ռութէկ: Ինչժամ Բանաստեղծ:

Իրենաւ: Որովհետեւ դու անորժ ու անկամք ես և քո ձեռնար-
կութիւնների ու մաքերի համար կտարեալ արձակ: Սկզբում
սպանեցիր դու իմ հոգին,—ապա ձեսկերպում ես ինըդ քեզ
զղջանքի, ստրջանքի ու ինքնամբաստանութեան մէջ (ծիծա-
զում է) և կարծում ես թէ դրանով ամեն ինչ լրացաւ:

Ռութէկ: (Խրոխաւ) Ես գեղարուեստագէտ եմ, Իրենաւ—և
չեմ ամաչում մի քանի թուլութեանց համար, քանի որ գեղա-
րուեստագէտ եմ ծնուած, տեսնում ես և ուրիշ ոչինչ էլ չէի
կարող լինել, բացի գեղարուեստագէտից:

Իրենաւ: (Նայում է նենգ ժպտով ու խօսում քաղցրու):
Բանաստեղծ ես դու, Արնոլդ: (Չեղը կամացով քսում է նրա մա-
զերին:) Իսկ դու ծեր, սիրելի մեծ—երեխայ այդ չես տեսնում:

ՈՒՈՒՅԵԿԻ. (Տիսուր) Ինչնու յարատե ինձ բանաստեղծ ես
կոչում:

Իրենա: (Դիտուն) Որովհետե այդ խօսքի մէջ մի արդա-
րացումն կայ, բարեկամս: Մի թողութիւն - որ բոլոր թողու-
թեանց վըալ իր քօղն է տարածում: (Յանկարծ այլ տոնով:)
Բայց ես այն ժամանակ մարդ էի: Մի կեանք պէտք է ունե-
նայի, մի ճակատագիր պէտք է կրէի: Տես արս ամենը թողեցի,
դէն ձգեցի միայն քեզ հպատակուելու: - Օ, այդ մի ինքնա-
սպանութիւն էր. մահուան մի յանցանք ինքս իմ դէմ: (Կէս
շնչուն) Իսկ այս յանցանքը քաւել ես չեմ կարող: (Նստում է
Ռուբէկի մերձ առուակի տիկին, աչքերով հետևում նրան ու
ցնդուածի պէս փետում թփերի ծաղկիները:) Ես պէտք է երե-
խաներ ծնէի: Շատ երեխաներ: Իսկական երեխաներ: Ո՞չ
այնպիսիները որոնք գերեզմաններում պահուէին: Այդ կը
լինէր իմ կոչումը: Երբէք չը պէտք է քեզ ծառայէի քեզ
բանաստեղծիք:

ՈՒՈՒՅԵԿԻ. Լաւ ժամանակներ էին, իրենա, հրաշալի ժամա-
նակներ, երբ յիշում եմ —

Իրենա: (Նայում է ընթոյշ հայեացըով:) Գիտես ինչ
խօսք ասացիր դու այն ժամանակ, երբ պատրաստ էիր, պատ-
րաստ ինձ և մեր երեխայի հետ: (Թեքըւում է դէպի նա): Յի-
շում ես այն փոքրիկ խօսքը, Արնորդ:

ՈՒՈՒՅԵԿԻ. (Նայում է հարցական): Միթէ այն ժամանակ
ես գործ եմ ածել մի այնպիսի խօսք, որ դու դեռ յիշել կարո-
ղանում ես:

Իրենա: Այն, Զես յիշում այլ ես:

ՈՒՈՒՅԵԿԻ. (Գլուխը շարժում է): Ո՞չ, իսկապէս ոչ: Գոնէ
ալժմ:

Իրենա: Դու վերցրիր իմ երկու ձեռները, սեղմեցիր բո՞ք
բոք, կերպով, այն ինչ ես շնչասպառ սպասում էի բո առջև:
Ապա ասացիր՝ ամբողջ սրտով շնորհակալ եմ քեզ, իրենա:
Սա մի յաղթալից էպիզօդ էր ինձ համար:

ՈՒՈՒՅԵԿԻ. (Տարակուսական): Էպիզօդդ ասացի, Ուրիշ ան-
գամ ալդ խօսքը գործ չեմ ածում:

Իրենա. Այն, էպիզօդ ասացիր:

ՈՒՈՒՅԵԿԻ. (Հաճելի հանդարտութեամբ): Իսկապէս այդ մի
էպիզօդ էլ էր:

Իրենա. (Կարճ): Այդ խօսքի համար թողեցի քեզ:

ՈՒՈՒՅԵԿԻ. Ամեն ինչ դու բո սրտին շատ մօտ ես ընդու-
նում, իրենա:

Իրենա. (Սրբելով ճակատը) Թերես դու իրաւացի ես:
Թօթափենք մնջնից ամեն մաղձ ու ծանրութիւն, (Փեաբռւմ է
մի վայրի վարդի տերեներ ու առուակը նեառում) Նայիր,
Արնոլդ: Ահա լողում են մեր թոչունները:

Որութէկ. Ի՞նչ թոշուններ,

Իրենա. Կարմրաթեկիները. չես տեսնում: Վարդագոյն
կարմրաթեկիները:

Որութէկ. Նրանք չեն լողում, այլ տարւում են զրի
հոսանքից:

Իրենա. Ուրեմն նրանք որորներ են (Lapus):

Որութէկ. Կարմիր կառւցներով, այսու (Պոկում է մեծ մեծ
տերեներ ու առուակը նեառում) Այժմ նրանց ետևից ուղար-
կում եմ իմ շոգենաւերը:

Իրենա. Միայն առանց որսորդների:

Որութէկ. Առանց որսորդների: (Ժպառում է.) Յիշում ես
այն ամառը, երբ նստած էինք գիւղական խրճիթների տոշե,
Տառնիացէր լճի ափին:

Իրենա. Շաբաթ երեկոյեան, երբ պրծելէինք շաբաթուայ
աշխատանքից—

Որութէկ:—և երկաթուղիով այնտեղ էինք եկել կիւրակին
զբում անցնելու—

Իրենա. (Ատելութեամբ լի աչքերով) Այդ մի էպիզոդ
էր, Արնոլդ:

Որութէկ: (Իբր թէ չը լսելով) Այնտեղ ևս առուակում
լողալու թոշուններ էիր բաց թողնում. Ջրաշուշաններ:

Իրենա. Սպիտակ կարապներ էին նրանք:

Որութէկ: Կարապներ, այսու Եւ ես դեռ յիշում եմ, ինչպէս
մի մեծ, անհարթ թերթ էի կպցըել նրանցից մէկին: Թրթըն-
ջուկի թերթ էր այն—

Իրենա. Այդպէս կատարեալ Լոհենգրինի նաւակն էր
դարձել—կարապով հանդերձ:

Որութէկ. Ի՞նչ սիրով խաղում էիր դու, Իրենա:

Իրենա. Մենք լաճախ այդպէս խաղում էինք:

Որութէկ: Կարծում եմ ամեն կիւրակի—ամբողջ ամառուայ
ընթացքում,

Իրենա. Դու ասում էիր, ես կարապն եմ և քաշում եմ քա-
նաւակը:

Որութէկ. Համ: Այս: (Թաղով զբաղստած:) Տես որորները
ինչպէս զրի հոսանքով ներքեւ են լողում:

Իրենա. Իսկ քո նաւերը ամեն ինչ ցամաք են նետում:

Որութէկ. (Աւելի շատ տերևներ թափելով,) Ես դեռ նա-
և երի պաշար ունեմ: (Դիտում է տերևներին, մի քանի թեր-
թիկներ ազատում և փոքր պառաջայից ասում:) Դու իրենա,
Տառնիացէր լճի ափին այն գիւղացու տնակը ես գնել եմ:

Իրենա. Հմ, այժմ քննն է: Դու յաճախ էր ասում, թէ
հենց որ միջոց ունեցար իսկոյն կը գնես:

Որութէկ. Յետոյ միջոց ես բաւական ունէի և գնեցի այդ
անակը:

Իրենա. (Նայում է խէթ:) Այժմ այնտեղ ես ապրում,—
մեր էին պանը:

Որութէկ. Ո՛չ, տնակը վաղուց քանդել եմ տուել և կառու-
ցել մի նոր հիանալի ու յարմար ամարանոց (վիլա) շուրջն
էլ պարկ: Առհասարակ ամառը այնտեղ ենք անցնում
մենք—ես:

Իրենա: Դու և միւսը դուք երկուսդ այժմ միշտ այնտեղ
էք լինում:

Որութէկ. (Փոքր համարձակ:) Այն, եթէ մենք,—ես և կինո—
չենք ճանապարհորդում ինչպէս այս տարի:

Իրենա. (Շոռուած հայեացքով:) Լաւ կեանք էր Տառնիա-
ցէր լճի ափին:

Որութէկ. Բայց և այնպէս, Իրենա—

Իրենա. Բայց և այնպէս այդ ամբողջ սիրուն կեանքը
մենք անտես արինք:

Որութէկ. (Կամաց ու ազդունաւ:) Այժմ զզջալ ուշ է:

Իրենա. (Չի պատասխանում, մնում է փոքր լուռ, ապա
նայում հեռունաւ:) Տես, Արնորդ: Ահա արել մայր է մանում:
Տես ինչպէս դաշտը նրա վերջին ճառագայթներից կարմիր
ներկուել է:

Որութէկ. (Նայում է) Վաղուց է ինչ լեռնային երկուստ
արևի սուտք չեմ տեսել:

Իրենա. Եւ ոչ էլ արևի ելք:

Որութէկ. Արևի ելք կարծեմ ես դեռ երբէք չեմ տեսել:

Իրենա. (Մորասուզուած ժպտում է) Ես մի անգամ արևի
մի սքանչելի ելք եմ տեսել:

Որութէկ. Հմ: Որտե՞ղ:

Իրենա: Բարձր, բարձր, մի սարսափելի անդունդի ափին:
Դու ինձ վերև հրապուրեցիր և խոստացար աշխարհքի հրաշալիք-
ները ցոյց տալ, եթէ—

Որութէկ. եթէ:—Նմւ:

Իրենա. Ես հաւատացի ու հետեցի քեզ, Ապա այնտեղ ես

Ֆունկ իջայ, ազօթեցի ու ծառայեցի քեզ: (*Մի բոպէ լռում է, ապա կամաց:*) Այնտեղ ահա, արևի մի ելք տեսայ:

Ռուբէկ. (*Խուսափելով:*) Զէիր ցանկալ մեզ հետ վիլա գալ ու մեզ հետ ապրել:

Իրենա. (*Արհամարհական ժպտով:*) Քեզ ու միւսի հետ միասին:

Ռուբէկ. (*Ենշտելով:*) Ինձ հետ միասին—որպէս նախկին օրերին: Որպէս զի բացուեն իմ ներսը կողպուած բոլոր դռները: **ԶԵՆ կամենում,** իրենա:

Իրենա. (*Գլուխը շարժելով:*) Թո ներքինի բանալին այլ ևս չունեմ ես, Արնոլդ:

Ռուբէկ. Այդ բանալին դու ունես, միմիայն դու: (*Աղա-շական:*) Օգնիր ինձ նորից ապրելու:

Իրենա. (*Անշարժ:*) Դատարկ երազներ: Ունայն-անկենդան երազներ: *Մեր կենակցման այլ ևս ոչ մի յարութիւն չի հետեւի:*

Ռուբէկ. Թոնէ շարունակենք մեր խաղը:

Իրենա. Այն, խաղալ, միայն խաղաբ

(Նստում են, վետրում ծաղիկների թերթիկները ու առուակ-ներում: Խորքից, դէպի ձախ, երևում են Ուլֆհայմ ու Մայա, որսորդական պատրաստութեամբ: Ետևից գալիս է Լարսը, ծառան, ջների ոհմակով, ով անցնում է դէպի աջ:)

Ռուբէկ. (*Նկատելով նրանց:*) Ահա փաքրիկ Մայան արջասպանի հետ երևում է:

Իրենա. Թո Մայան:

Ռուբէկ. Կամ թէ նրանը:

Մայա. (*Փոքր յետոյ նկատում է երկուախն:*) Բարի գիշեր, Ռուբէկ: Երազիր իմ մասին: Այժմ գնում ենք արկածախնդրութեան:

Ռուբէկ. (*Ցետ կանչելով:*) Ի՞նչ տեսակ արկածախնդրութեան:

Մայա. (*Մերձենալով:*) Ես այժմ ամենից առաջ ապրել եմ կամենում միայն:

Ռուբէկ. (*Հեղնական:*) Նմէ, դուն էլ, փոքրիկ Մայա:

Մայա. Այն Բացի այդ ես կազմել եմ հետեւայ ոտանաւարը՝ (*երգում ու ցնծում է*)

Ես ազատ եմ, ես ազատ:

Բանտի դաժան կաղանքից,

Որպէս արձակ մի թռչուն,

Ես այլ ևս ազատ եմ:

Այս ես այժմ կարծում եմ, որ վերջապէս արթնել եմ,
Ռուբէկ. Այդպէս է թուռմ:

Մայա. (Ծնչում է ամբողջ թոքերով) Ա՛ն—ի՞նչ երկնային
թեթութիւն:

Ովկինայմ. (Հեռուից) Սատանան տանէ ձեր ցանկու-
թիւնը. կամենում էք մեզ անյաջողութիւն հմայել: Զէք տես-
նում, որ որսի ենք գնում—

Ռուբէկ. Ի՞նչ կը բերես ինձ համար որսից, Մայա:

Մայա. Դու ինձնից ձեակերպելու համար մի գիշատիչ
թռչուն կը ստանաս: Ես մէկին թեաւոր կանեմ:

Ռուբէկ. (Դառն հենով) Այս, մէկին թեաւոր կանես
սխալմամբ—այդ քեզ յատուկ է:

Մայա. Իմ ապագան թողէք ինձ: (Չարաճճի ծիծաղով.)
Մնաս բարեցանկանում եմ քեզ մի սիրուն, հանգիստ ամա-
րային գիշեր.

Ռուբէկ. (Չուարթի) Ծնորհակալ եմ: Իսկ աշխարհքի ամեն
անրախտութիւն ձեզ և ձեր որսի վրայ:

Ովկինայմ. (ծիծաղում է) Բոռագօ, այդ մի ցանկութիւն
է, որպիսին անհրաժեշտ է:

Մայա. (ծիծաղով) Անչափ ջնորհակալութիւն, Ռուբէկ,
անչափ ջնորհակալութիւն:

(Մայա և Ուլիփինայմ գնում են դէպի աջ սարահարթի վրայով.)

Ռուբէկ. (Փոքր պառազայից) Ամառային գիշեր լեռնե-
րում: Այս, այս է կեանքը:

Իրենա. (Յանկարծ, աշքերի վայրենի արտայատութեամբ.)
Ցանկանում ես մի այդպիսի ամառային գիշեր-ինձ հետ:

Ռուբէկ. (Զերները տարածելով) Այս, այն: Արի:

Իրենա. Իմ սիրած տէր ու հրամանատար:

Ռուբէկ. Օ՛, Իրենա:

Իրենա. (Ժպտում ու սեղմում է նրա կրծքին: Կերկեր:)
Սա միայն մի էպիզոդ կը լինի—(արագ շնչելով) Լուր:
Մի շրջանայիր, Արնոլդ:

Ռուբէկ: (Ծնչելով) Ի՞նչ կայ:

Իրենա: Մի անշարժ հայեացք դիտում է ինձ:

Ռուբէկ: (Ակամայ շրջում է) Ո՞ւր է: (Դիտում են միա-
սին:) Ա՛ն: (Չափ կողմը, անտառի միջից երկում է սարկաւ-
գունու գրուխը:)

Իրենա. (Բարձրանում է ու խզուած ձայնով ասում:) Մենք
պէտք է բաժանուենք: Դու մնա նստած, լսում ես,—դու ինձ

մի ուղեկցիր։ Թեքւում է նրան ու շնչում։) Ցը տեսութիւն
մինչ այս գիշեր, այստեղ։

Ռուբէկ. Իսկ դու կը գնա, Իրենա։

Իրենա. Անպատճառ կը գամ։ Սպասիր ինձ այստեղ։

Ռուբէկ. (Կրկնում է որպէս երազում) Ամառային գիշեր
լեռներում։ Քեզ հետ Քեզ հետ։ (Նրանց հայեացքները հանդի-
պում են) Օ՛, Իրենա.—այդ կեանք կը լինէր, սակայն մենք
կատակել ենք,—մենք երկուս։

Իրենա. Ինչ որ անվերստեղծելի է, մենք կը տեսնենք
միայն—(ընդհատում է)։

Ռուբէկ. (Հարցական) Միայն—

Իրենա. միայն այն ժամանակ, երբ մենք մեռածներս
սթափուենք։

Ռուբէկ. (Գլուխը տիրութեամբ շարժում է) Հա—ինչ
կը տեսնենք իսկապէս։

Իրենա. Կը տեսնենք, որ մենք երբէք չենք ապրել։ (Գնում
է գէպի բուժարան։ Սարկաւագուհին ճանապարհ է տալիս, ապա
ճետեում նրան։ Լսում է Մայալի ժայռից տարածուող երգը։

Ես ազատ եմ, ես ազատ։

Բանտի դաժան կապանքից,

Որպէս արձակ մի թռչուող,

Ես այլ ևս ազատ եմ։

8. ԲՈԶԻԵԱՆ

(Վերջը միա համարում)